

Եթէ Քեզ Մոռնա՛նք, թո՛ղ Մեր...

Գրեց ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Դեկտեմբերի սկիզբը, Մոսկուայի մէջ գումարուեցաւ Սորհրդային Միութեան Գերագոյն Սովետին մէկ ժողովը, Ղարաբաղի տագնապալի, երբեմն արհեստի վէճին հաշտարար լուծում մը գտնելու օրակարգով: Սորհրդակցութեան կը մասնակցէին նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահները, որոնք իրենց երկիրներուն պահանջները եւ առարկութիւնները կը ներկայացնէին:

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Հրանտ Ոսկանեանը խօսեցաւ Գերագոյն Սովետին եւ մեղադրեց Ատրպէյճանի պետական վարիչները, որ չէին դատապարտած հակա-հայ խռովարար ցոյցերը եւ Մուսկայիթի մէջ սպաննուած անպաշտպան հայերու ջարդարարները եւ պատճառ դարձած էին դառն պայթարներու երկու երկիրներուն միջեւ:

Ատրպէյճանի նախագահը, Սիւլէյման Տատլիբե պատասխանեց Ոսկանեանին եւ մեղադրեց Հայաստանը ծագած խռովութեանց համար՝ որովհետեւ երեւանը ճարտարաբանական փոքր գործարան մը կը կառուցանէր Ղարաբաղի մէջ եւ ազերիները ատիկա փորձ մը կը նկատէին աւելի

վերագրումներուն իբրեւ պատասխան:

«Եթէ Ատրպէյճանի ժողովուրդը ցոյց տուած ըլլար քաղաքական հասունութիւն եւ քաղաքային իմաստութիւն, ան պիտի դատապարտէր Սուվկայիթի մէջ պատահած դէպքերը որպէս ոմիր մը ուրիշ ազգի մը դէմ», յայտարարեց Հայաստանի նախագահ Հրանտ Ոսկանեան, ակնարկելով Ատրպէյճանցիներու կողմէ առնուազն 26 հայերու սպանութեան անցեալ Փետրուարին», հաղորդեց «Լոս Անճելըս Թայմզ» իր Դեկտեմբեր 1Ի, Հինգշաբթի օրուան թիւով:

«Այն ատեն տեղի պիտի չունենային այն պատահարները, որոնք եղան Կիրովպատի եւ Նախիջեւանի մէջ», աւելցուց ան, այս անգամ ակնարկելով հակահայ նոր խռովութեանց, ուրիշ երկու Ատրպէյճանական քաղաքներու մէջ»:

Եւ կը շարունակէ «Թայմզ»ի թղթակիցը Մայքըլ Բարքս:

«Այն ատեն արտասովոր յարձակում մը կատարելով Ատրպէյճանի նախագահ Սիւլէյման Տատլիբի վրայ՝ Ոսկանեան ամբաստանեց Տատլիբը անձնապէս, անտեսելուն համար Կորպաչովի կոչերը, որ խաղաղ լուծում մը գտնեն

վարան բացատրեցին, վիճանանեցան, հայոց պատմական իրաւունքները պաշտպանելով եւ անոնց արդարադատ ոգիին կոչում ըրին, որ Ղարաբաղն ու անոր հայութիւնը ազատեն Ատրպէյճանի բռնաւոր, թշնամական կապանքներէն:

Եւ պատահեցաւ Դեկտեմբեր 7ի ահուկի դէտը, Հայաստանի բնութիւնը յանկարծ դարձաւ մոլեգնած եղեռնագործ եւ կործանեց չէն քաղաքներ ու գիւղեր, եւ կոտորեց բիրաւոր հայ մարդիկ, կիներ, ծաղկատի մանուկներ: Մոսկուա բազմահար երկաթուղային վակոններով ու բեռնատար սաւառակներով օգնութիւն փութացուց Լենինական, Կիրովական, Սպիտակ: Համատարած փրատակներ իրենց աւերակներուն տակ, մէկ վայրկեան տեւող երկրաշարժով սպաննեցին 25,000 զոհերը:

Աշխարհի բազմաթիւ երկիրներէն առատաձեռն օժանդակութիւն ընծայուեցաւ աղէտահար Հայաստանին, - զեղ ու հիւանդանոց, բժիկներ ու մասնագէտներ, կազմաձևեր ու մեքենաներ: Սփիւռքի հայութիւնը, խորապէս ցնցուած, տառապանքով ու արցունքով, անմիջապէս ձեռնարկեց կազմակերպուած աշխատանքի, արշաւներու, հանգանակուեցան բազմամիլիոն տղարի գումարներ, հազուատեղէն եւ ամէն տեսակ աջակցութիւն փութացուցին իրենց հայրենի եղբայրներուն ու քոյրերուն:

Սովետ Միութեան Համայնավար Կուսակցապետ եւ երկրին նախագահ Միխայիլ Կորպաչով այդ շրջանին կը գտնուէր Միացեալ Նահանգներու մէջ եւ նախագահ Ռանըլտ Ռեյքընի հետ ունեցաւ զազաթային խորհրդաժողով ու կնքեցին հեռահաս նշանակութեամբ դաշինքներ, որոնք յաղթանակի ու ցնծութեան առիթներ եղան երկու կողմերու պետերուն համար: Կորպաչով եւ իր կինը Բայիսան ամէն տեղ ողջունուեցաւ խանդավառ ջերմութեամբ: Բայց յանկարծ՝ Դեկտեմբեր 7ին, հրճուանքի մթնոլորտը սեւցաւ սարսափի եւ սուգի կակիծով: Ահուկի երկրաշարժ մը հարուածեց Հայաստանը, կործանում ու մահ սփռելով: Եւ Միխայիլ Կորպաչով իր ծրագրուած պետական հանդիպումները Գուպա եւ Անգլիա քննեց ու անմիջապէս իրենց խումբով վերադարձաւ Մոսկուա: Յաջորդ օրը մեկնեցաւ Երեւան եւ անկէ գնաց ու շրջեցաւ Լենինական, Կիրովական ու Սպիտակ, դիտեց համատարած փրկուածները եւ ողբաց բիրաւոր զոհերուն շարքարագին մահերը:

Բարեբախտաբար «Չուարթնոց» օդակայանին միաստար դէպքը վատ հետեւանքներ չունեցաւ, զարտուղի, կորուստներու չյազեցաւ: Բայց դժբախտաբար՝ այդ «գրաման» մոլորած վարիչները շատ աւելի ծանրալիւտ արկածախնդրութեան ձեռնարկեցին, անխիտանական արարքներով, փտանգալի կարգախօսներ պոռոչտալով: Երեւանի մէջ, Օփերայի հրապարակին վրայ հաւաքուած հոծ բազմութիւնը անոնք փորձեցին գրգռել հակապետական ցոյցերու, խռովարար պահանջներ աղաղակելով բարձրախօսի վրայ: Հեռախօսի կազմածին դէմ անոնք սկսան եռագոյն դրօշակը ծածանել եւ Հայաստանի անկախութեան առաջադրանքը հռչակել, կարծես իբրեւ մարտահրաւէր Սովետ Միութեան Կեդրոնական Իշխանութեան: Եւ աւելին, առիթով մը, հանդուցեալ Փանջուսիի Մապլվարեան ցնորքներու նոյն շառաւիղները, ապշեցուցիչ յիմարութեամբ մը, եռագոյնը հիւսեցին Էսդոնիոյ, Լատվիոյ, Լիտվանիոյ դրօշակներուն հետ, առաւել զայրացնելու համար Մոսկուայի Սորհրդային ղեկավարները:

Անոնք իրենց կոյր ատելութեան մէջ ընդդէմ Սովետ պետերուն՝ ոտնակոխեցին բացայայտ ճշմարտութիւն մը: Էստոնիա, Լատվիա Լիթվանիա երկիրներ են, առանց շուրջինին իրենց գոյութեան սպառնացող մահացու ստիպանքներ: Եւ եթէ Մոսկուա յօժարի անոնց անկախութիւն տալ՝ ոչ մէկ արտաքին թշնամի կամ վտանգ կը դիմագրաւեն անոնք:

Մինչդեռ, ցաւազինօրէն, եղբրականօրէն հակոտնեայ են հայոց հայրենիքին ու ժողովուրդը դիմակալող պայմանները: Եւ այդ մոլորանքին կալանաւոր խռովարարները, որոնք տակաւին

(Շարքը տեսնելու 10րդ էջ)



Երեւանի մէջ ցոյցերու առաջին շրջանին ժողովուրդը կը կրէր Կորպաչովի լուսանկարները, դատապարտելով նաեւ կեդրոնական մամուլին կողմնակալ եւ անհիշող լրատուութիւնը

զօրացնելու հայոց պահանջը այդ Մարզին վրայ: Դժուար է երեւակայել անգամ այսքան շարախանձ մտածում նախագահի մը կողմէ: Սորհրդային Միութեան Կեդրոնական Կառավարութիւնը իր գանձէն 640,000-000 ռուբլի յատկացուցեր էր իբրեւ դրական հատուցում Ղարաբաղի հայոց գանգատներուն, որ Մարզին մէջ լայն ծաւալով ձեռնարկներ կատարուին՝ հայերէն դպրոցներու, մշակութեան կեդրոններու, հեռատեսիլի եւ յարակից հիմնարկներու շինութեան վրայ, անոնց արագ զարգացման համար: Եւ այդ ծրագիրով՝ նոյնիսկ աշխատանոց մը կանգնելուն դէմ՝ Ատրպէյճանի նախագահը բողոք բարձրացուցեր է: Բայց նոյն ատեն, իրենք Պագուի մէջ բազմամրոց ցոյցեր սարքեր են, հակահայ եւ հակառուս կարգախօսներով եւ Այաթոլլահ Նոմէյնիի մեծագիր պատկերներով եւ արդի թուրքիոյ դրօշակները պարզելով: Իսկ ի՞նչ կապ ունին անոնք Ղարաբաղի վէճին հետ, կամ Սովետ Միութեան մէկ ներքին վէճին մէջ:

Հայաստանի նախագահը, Հրանտ Ոսկանեան խստօրէն դատապարտեց Տատլիբը, անոր անմիտ

պայքարին ... եւ ան բացարձակապէս կը մերժէր որեւէ իրաւախոհութիւն...»:

Ղարաբաղի գոյալիճակին, անոր ներկային եւ սպագային համար մղուած պայքարը անցեալ տարուան մղձաւանջին մէջ՝ ապացոյցը տուաւ պայծառ իրողութեան մը: Իրապէս՝ հայ ժողովուրդը եւ Հայաստանը բախտաւոր եղան, որ այս ճգնաժամային շրջանին ունեցան իմաստուն ու կորովի ղեկավարներ՝ Հայաստանի համայնավար կեդրոնի առաջին քարտողար Սուրէն Յարութիւնեանը, մայր հայրենիքին նախագահ՝ Հրանտ Ոսկանեանը, վարչապետ՝ Ֆատէյ Սարգսեանը եւ հաւատաւոր գործակիցներ, որոնք ջերմեռանդ հայրենասիրութեամբ տողորուած, իրապաշտ, դիւանագէտ առաջնորդներ հանդիսացան: Սոսիալարար ցուցարարներու ամբոխային, վնասարար ժխտին դիմաց՝ անոնք յաջողեցան մնալ սառնարիւն, քաջարի ղեկավարներ, հայոց ազգային հիմնական շահերը հետապնդող յանդուգն ախոյեաններ: Սովետ Միութեան Գերագոյն Իշխանութեան մօտ, անոնց ժողովներուն մէջ, հայ պետական վարիչները խոր համոզումով եւ ան-

